600.0256.10.07.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

10 հուլիսի 2019 թվականի №256Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՈՒԴԻՏԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «է» ենթակետը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման №0092 լիցենզիայի պայմանների 43-րդ կետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի №753Ա որոշման 2-րդ կետի 2-րդ, 3-րդ և 5-րդ ենթակետերը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում** է.

1. Հաստատել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային գործունեության (իրականացված կապիտալ ծախսերի) տեխնիկական աուդիտի ծրագիրը և ժամանակացույցը համաձայն՝ №1 և №2 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) աուդիտորական ծառայություններ մատուցողի ընտրությունն իրականացվում է միջազգային մրցույթով.
   2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը աուդիտորական ծառայությունների ձեռքբերման մրցույթի հայտարարությունը և

սույն որոշման №1, №2 հավելվածները հրապարակում է հայերեն և անգլերեն տարբերակներով.

3) սույն որոշման №2 հավելվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը անհրաժեշտ է ամրագրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության և մրցույթում հաղթող ճանաչված աուդիտորի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրում.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը աուդիտորական ծառայությունների համար աուդիտորին վճարում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հանձնարարականի հիման վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
10 հուլիսի 2019 թ.